



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԿԱԶՄԵԼ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏՐՈՍ — 1930 — ՅԵՐԵՎԱՆ






338.1Կ (09)

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԿԱԶՄԵԼ
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

A $\frac{I}{4421}$



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ—1930

Հրատ. № 1238

Գրատեպ. № 3040 (բ) Պատ. № 264 Տիրաժ 5000

Պետհրատի Յերկրորդ Տպարան Յերևանում

ԻՆՋՊԵՍ ՎԵՐԱԿԱԶՄԵԼ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵ-
ՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղացիական անտեսուլթյունը շատ քիչ
արդյունք է տալիս:

Հազիվ է պատահում, վոր մի հեկտար հողը
(իննը տասերորդ դեսիաաինը) 9 ցենտներից
(55 փթից) ավելի բերք տա: Բամբակի բերքը
մի հեկտարից սովորաբար 10 ցենտներից էլ (60
փթից) չի անցնում:

Պաղողի այգիները տալիս են 300 վեդրո-
ւից էլ պակաս գինի: Կովը տալիս է 40 վեդրո
կաթ, վոչխարը 3-4 ֆունտ բուրդ և ալյն:

Բացի այս, գյուղացիական անտեսուլթյու-
նից ստացված բոլոր մթերքները մեծ մասամբ
լինում են վատ հատկության, հացահատիկները՝
ցածր տեսակի, խաբճոտ, բամբակը՝ կեղտոտ,
պանիրն ու յուղը՝ վատ, բուրդը՝ աղտոտ, հավի
ձվերը՝ մանր և այլն:

Մինչդեռ ամենքը գիտեն, վոր հացահատիկ-
ների ու բամբակի բերքը կարելի չէ բարձրացնել
յերկու անգամից էլ ավելի, կովի կիթը կարելի

յե հասցնել տարին 300 վեդրոյի. խաղողի այգիներէ մի հեկտարից 1500 վեդրո ստանալը հազվագյուտ բան չէ:

Բանն ինչհամն ե ուրեմն:

Ախր չի կարելի ասել, թե մեր գյուղացին ծուլլ ե կամ վատ տնտես ե:

Գլխավոր պատճառը կայանում ե նրանում, վոր սումր, անհաս գյուղացիական տնտեսությունը չի կարելի բարելավել: Ինչ ել անես, ինչ աշխատանք ել թափես, նա միշտ կմնա աղփաս ու յետամնաց:

Վորպեսզի ամենքին պարզ լինի այս, քննենք գյուղացիական տնտեսութեան յետամնացութեան գլխավոր պատճառներն ու տեսնենք, թե կարելի՞ չե վերացնել այդ պատճառները, յետե մնա մանր տնտեսութեանը:

Սկսեմք հողագործութեանից:

Վորպեսզի հողը լավ արդյունք տա, պետք ե կատարել հետևյալը՝

1. Պետք ե ճիշտ ընտրել, թե վոր բույսերն ավելի համապատասխան են տեղի պայմաններին ե կարող են տալ այդ հողի վրա ամենաբարձր արդյունքը: Չե՞ վոր ամեն տեղ չի կարելի ցանել, որինակ, այնպիսի բույսեր, ինչպիսիք են բամբակը, կենսֆը, ծխախոտը: Այս բույսերը մեծ ջերմութիւն են պահանջում, դրա համար

ել հյուսիսային կամ լեռնային յերկրներում չեն բուսնի: Իրա համար ել պէտք է ամեն կերպ աշխատել մեծացնել նրանց ցանքսն այն տեղերում, ուր նրանք բուսնում են:

Այդպէս ել խաղողը չի կարելի ամեն տեղ հասցնել: Դրա համար ել ուր հնարավոր է այդ, պէտք է պարապել դրանով և այլն:

Այդպէս է պահանջում ամենապարզ հաշիվը. մի դեռիատին բամբակը կանոնավոր տնտեսութեան մեջ կտա 400—500 ուռլի արդւունք, մի դեռիատին ծխախոտը՝ 1000—1500 ուռլի, մի դեռիատին խաղողը՝ 2000—3000 ուռլի: Իսկ մի դեռիատին ցորենն ամենալավ դեպքում կտա 150—200 ուռլի:

Զնայելով վոր այս բանը ամենքի համար շատ պարզ ու հասկանալի պիտի լինել, սակայն մենք տեսնում ենք, վոր շատ մեծ տարածութեամբ հողեր ամենալավ տեղերում գլուղացիք ցանում են ցորեն ու գարի, փոխանակ ցանելու բամբակ, ծխախոտ և ուրիշ արժեքավոր բույսեր: Սա առաջ է գալիս նրանից, վոր վանք ճնշեան ամենից առաջ աշխատում է ստանալ այն, ինչ հարկավոր է իրան իր ընտանիքն ու անասունները կերակրելու համար, միանգամայն մոռանալով, վոր թանգարժեք բույսեր ցանելիս, ինչպէս բամբակն է, ստացված փողով կարելի է

գնել բոլոր անհրաժեշտ բաներն, ու դեռ մեծ ոգուտ ել կմնա գրպանում:

2. Լավ տնտեսը, յերբ վորոշեց, թե ինչ բույսեր պիտի ցանի, անուհետև նա պիտի այն-պես բաժանի հողն այդ բույսերի սեզ, վոր՝ ա) հողի ամեն մի կտորի վրա հերթով ցանվեն զանազան բույսեր յեկ վնչ թե օտարեցօտի կրկնվի նույնը, բ) վոր բոլոր հողն ոգտագործվի ամբողջապես: Հողի այդպիսի կարգավորումն ու ցանքսի հերթական փոփոխումը կոչվում է ցանֆսափոխություն, վորը շատ մեծ նշանակութիւն ունի տնտեսութեան մեջ: Մեզանում հաճախ կը պատահեք այնպիսի տնտեսութիւնների, ուր հողը բաժանում են յերկու մասի. մի մասի վրա միջանի տարի շարունակ ցանում են ցորեն, իսկ մյուս մասը թողնում են խամալու: Հետո, յերբ ցանած հողը հոգնում է ու դադարում բերք տալուց, այժմ ել այդ հողն են թողնում խամալու, իսկ նախկին խամցածը ցանում:

Սա չի ցանքսափոխութիւնն է, բայց շատ յետամնաց, վոր միայն հնում կարելի յեր գործադրել, յերբ հողը շատ եր, իսկ մարդիկ բիշ: Իսկ այժմ, յերբ հողը շատ բիշ է, չի կարելի այդ քիչ հողի կեսն ել պարապ թողնել: Յեռադաշտյան ցանքսափոխութիւնն ել, յերբ հողի մի յերրորդն են թողնում խամալու, մենք ձեռնառ-

չենք համարում: Դրա համար ել պետք է այն-
 պիսի ցանքսփոխութուն մացնել մեր տնտե-
 սության մեջ, վոր վնչ մի կտոր հող պարասպ
 չմնա, ու միաժամանակ հողը չհոգնի, ու ժառանգ
 չլինի: Յեւ միանգամայն կարելի չե արդ, յեթե
 բույսերը կանոնավոր դասավորենք: Որինակի
 համար բերում ենք ցանքսի այսպիսի մի դասա-
 վորութուն. ամբողջ հողը բաժանվում է հինգ
 մասի: Այդ մասերից մեկի վրա ցանվում է վիկ
 և հունիսին քաղվում անասունների կանաչ կերի
 համար: Վիկն այնպիսի հատկութուն ունի, վոր
 հողին տալիս է բույսի համար շատ կարևոր ու
 աննդարար մի նյութ, վոր կոչվում է ազոտ: Դրա
 համար նա վոչ միայն ուժասպառ չի անում հո-
 դը, այլ և հարստացնում, պարարտացնում է:
 Վիկից հետո, աշնանը նույն հողի վրա ցանում
 են աշնանացան ցորեն: Հողի մյուս կտորը ցա-
 նում են այնպիսի բույս, վորի բուկը պետք է
 վեր տալ, ծաք լերկրներում, իհարկե, ամենից լավ
 է ցանել բամբակ, իսկ համեմատաբար ցուրտ
 տեղերում՝ կարտոֆիլ, տակ և այլն: Յերրորդ
 արտը նույնպես կարելի չե բամբակ ցանել: Չոր-
 րորդը՝ աշնանացան, իսկ հինգերորդը պետք է
 ցանել կերի բաղամայա խոտ, ինչպես, որինակ,
 առվուլտ (լոնջա) կամ իշառվուլտ (эспарцет)
 և այլն: Չորս տարուց հետո հողի այն մասը,

վոր խոտ եր ցանած, պետք ե հերկել, վորովհետև նա արդեն լավ հանդատացած էլինի, խամցած, ուժերը հավաքած, և խոտի հատկացնել մի ալլ հողամաս: Այսպիսի դատավորման դեպքում դատարկ պարապ հող չի լինի, ու հողի ամեն մի փոքրիկ կտորն ել ոգուտ կբերի:

Սրանից ել լավ ցանքսափոխման ձևեր կան, բայց նրանց մասին առաջմ չենք խոսելու:

Կարող ե արդյոք մանր, առանձնացած գյուղացիական տնտեսությունն այսպիսի ցանքսափոխություն մտցնել իր մեջ: Վոչ, չի կարող: Այսպիսի ցանքսափոխություն մտցնելու համար պետք ե ունենալ մեծ ինվենտար (սարքուկարգ) ու աշխատող անասուններ: Յեթե խոտհարքը, ցորենի հունձը, բամբակի բուկը վեր տալը գյուղացին կատարի ձեռքի գործիքներով, նա չի կարող աշխատանքն իր ժամանակին հասցնել, իսկ դնել կարևոր մեքենաներ, ինչպես՝ հնձի, խոտհարքի և այլն, ու աշխատող անասուններ, գյուղացին չի կարող: Դրա համար ել մանր տնտեսն ինքն իրեն, առանձնացած, առանց մեքենաների չի կարող գլուխ բերել այդպիսի լավ ցանքսափոխություն: Յեթե նայելու լինենք մեր գյուղացիական բոլոր տնտեսությունները, վոչ մի տեղ մենք չենք գտնի լավ ցանքսափոխություն:

3. Վաս բերի ամենագլխավոր պատճառ-
ներից մեկն ել հողի վաս մեակումն եւ Վորպեա-
ղի հողը լավ բերք տա, նախ պետք ե լավ մը-
եակել ալն ե յերկրորդ՝ մեակել իր ժամանակին։
Ջանապան բույսեր մշակման զանազան ձևեր են
պահանջում։ Որինակ՝ քամբակի համար հողը
պետք ե վարել աշնանը (այգալիսի վարը կոչ-
վում ե հերկ)։ Հերկած հողը լավ ե հողմահար-
վում, քառուց ծեծկվում, հավաքում ե աննդա-
րար նլուխեր, ցրտից կոշտերը փխրվում են։
Վաղ դարնան այգալիսի հողը կտրելի յե առփնել
(ցտքանել) դիսկավոր տափանով, մնացած կոշ-
տերը մանրելու ու հողը հարթելու համար։

Բամբակի ցանքսից առաջ հողի վերին շեր-
տը պետք ե փխրացնել, վորպեսզի անպետք
խոտերը վոշնչանան, ու հողը փափկանա սերմի
համար։ Հալն այգալես փխրացնելու համար կան
հատուկ մեքենաներ մի տեսակ թաթերով, վոր
փափկացնում, փխրացնում են հողը, բայց շուռ
չեն տալիս նրան, չեն դարձնում։ Մյու մեքենա-
ները կոչվում են կուլտիվատորներ։ Վերին շեր-
տի այդ փխրացնելն ոգտակար ե ե այն տեսա-
կետից, վոր այգալիսի հողը լավ ե պահում խո-
տավուխում, վորովհետեւ այն հողը, վորի վերին
շերտը փխրացրած ե, այնպես շուտ չի չորա-
նում, ինչպես հարթ պտուկած հողը։

Անճամաւացան ցորենի համարնուհնպէս լավ ե հողը վարել աշնանն ու ալդպէս թողնել մինչեւ գարուն: Գարնանն այդ հողը տափնել դիսկավոր տափանով և ցանել վիկ: Հունիսին վիկը քաղել ու նորից վարել հողը: Վարելուց հետո հետևել, վոր անպետք խոտեր չբուսնեն, և չեթե բուսան, կամ նորից տափնել, կամ կուտիվատորով մաքրել: Ցանքսից առաջ դարձյալ պետք ե հողը փխրացնել կուլտիվատորով կամ տափանով:

Այս յերկու որինակը բավական են: Այս բոլոր աշխատանքները կատարելու համար անտեսությունը պետք ե ունենա՝ լավ գութան, կուտիվատոր, դիսկավոր տափան, յերկաթե զիգ-զագ տափան (ցաքան): Այս բոլոր մեքենաները 250 ռուբլուց ել ավել արժեն: Դեռ դրանից ել դուրս, վորպեսզի այս բոլոր մեքենաները կարելի լինի գործադրել, պետք ե ունենալ աշխատավոր անասուն: Գութանով խորն ու լավ վարելու համար պետք ե լծել յերեք զույգ յեզից վոչ պակաս:

Այժմ տեսնենք, թե ինչպէս ե մշակում իր դաշտերը գյուղացիական մանր անտեսությունը:

Գյուղացիական մանր անտեսություններին մեծ մասը մեքենաներ ու աշխատավոր անասուն կամ բոլորովին չունեն կամ ունեն միայն մի-

բանի մեքենա ու միքիչ ել աշխատավոր անասուն: Հողը մշակելու համար մեծ մասամբ գործածում են պտպենական փայտե գործիքներ (արոր, չութ), լերկաթե սուր ծայրով, վորը միայն հանկուտում ե հողն, առանց կանոնավոր, պետք լեղածին պես շուռ տալու, դարձնելու այն: Յեվ այդ փայտե մեքենան բանեցնելու համար հավաքում են միքանի տնից աշխատավոր անասուններն ու հերթով վարում արտերը: Շատ անգամ ել մեքենան ու աշխատավոր անասունները շատ բարձր վարձով քրեհով են վերցնում կուլակներից: Այսպիսի պայմաններում, պարզ ե, մտքից անգամ չի կարելի անցկացնել, թե հողը կարելի չե լավ ու իր ժամանակին վարել:

Դրանից հետո ել ինչ խոսք կարող ե լինել հողը տափնելու ու փխրացնելու մասին: Վորպեսզի կարողանան աշխատավոր անասուններն իրար հետ միացրած բոլոր մանր տնտեսների հողը վարել, հասցնել իր ժամանակին, պետք ե շտապել:

Այնանը շատ հազիվ են հերկում հողը, վորովհետեւ գարնանը նույն հողը պետք ե նորից վարել, ուրեմն և նորից քրեհել գործիքներ. իսկ այդ թանգ կնտի: Դրա համար ել հաճախ հողը վարում են մի անգամ—գարնանը և հենց այդ ժամանակ ել տափնում փայտե տափանով ու ցանում:

Պարզ ե, վոր հողի այսպիսի սեակումից հետո իզուր ե լավ բերք սպասելը:

Կարող ե մանր, առանձնացած տնտեսը բարելավել իր հողի մշակումը:

Յեթե նա կմնա առանձնացած, մանր տընտես, ապա նա չի կարող վոչինչ ուզղել իր տընտեսության մեջ, վորովհետեւ յերբեք չի կարող գնել իրեն անհրաժեշտ մեքենաներն ու աշխատավոր անասուններ:

Յուրաքանչյուր մեքենա այն ժամանակ միայն ձեռնտու յե տնտեսության համար, յերբ նա բեռնավորված ե լիապես, այսինքն տարվա մեջ կատարվում ե այնքան աշխատանք, վորքան իսկապես կարող ե կատարել: Չորս դեսիատին հող ունեցող տնտեսության մեջ վոչ մի մեքենա չի կարող արդարացնել իրան: Նույնիսկ գութանը վոր գութան ե, տարին 20 դեսիատինից ավել կարող ե վարել: Դիսկավոր տափանը կարող ե մշակել 60—70 դեսիատին: Ամեն մի տրակտոր կհերկի, կվաքի, կտափնի, կցանի, կհնձի ու կկալսի 225—250 դեսիատին, և այլն:

Նշանակում ե՝ քանի դեռ գոյություն կունենան մանր, անհասակամ-գյուղացիական շրջեսությունները, հողը նրանք պիտի վարեն փայտե արոտով ու քրեհով վերցրած աշխատավոր անասուններով, վորի համար սխալված պիտի լինեն շատ քարձր քրեհ վնարել կուլակին:

4. **Փյուզացու** հողի վաս բերեացվության լուրջ պատճառներից մեկն էլ պեժ և համարել վաս ցամխը: Վորպեսզի լավ բուսնի հատիկը, պետք և ընկնի փխրուն, խոնավ հողի մեջ: Բացի այս, վորպեսզի հետո ծիլերը կարողանան լավ աճել ու զարգանալ, պետք և ունենան բավարար տարածութիւն, սնունդ ու արևի լույս:

Իբրա համար էլ շատ լուրջ խնդիր և ցանք-ոյ հարմարավոր ժամանակ ընտրելը:

Վոչ պակաս լուրջ խնդիր և նաև կանոնավոր ցանելը: Ամենալավ ցանքս պետք և համարել շարքացան մեքենայի ցանածը: Նախ վոր շարքացանը կանոնավոր և ցանում հատիկն ու լավ տեղավորում և յերկրորդ՝ շարքով ցանած սերէիլը բավարար ազատ տեղ կունենան արմատներ զցելու ու սնունդ հավաքելու համար: Թեև շարքացանի ժամանակ 4 փութ սերմ և ցանվում ձեռքով ցանված ութի փոխարեն, սակայն բերքն ավելի շատ և ստացվում, վորովհետև ամեն մի թփիկը, փնջիկը, վոր դուրս և գալիս մի հատիկից, շարքացանի ժամանակ ավելի ուժեղ և, քան ձեռքով ցանածի:

Մանր, անհատակաւ տնտեսութեան մէջ շարքացան մեքենան ձեռնաւ չի, վորովհետև չի կարող նա իր ծախսը հանել նրա մի կտոր հողի վրա:

5. Հողի պարստացումը նույնպես մեծ նշանակություն ունի բերքն ստացացնելու համար: Պարտքտացման ամենալավ նյութ համարվում է աղբը: Հավ աղդեցութուն են ունենում նաև պարտագման ախպես կոչված հանքային նյութերը՝ սուպերֆոսֆատ, սելիտրա, ցիանամիդ և այլն: Մանր տնտեսության տեր գյուղացին աղբ քիչ է ունենում, վորովհետև չի կարողանում շատ անասուններ պահել: Իսկ հանքային պարարտանյութեր գնելու համար փող չունի, վորովհետև, վատ բերքի շնորհիվ, վոչինչ չունի ծախելու:

6. Բերքի համար մեծ նշանակություն ունի նայել սերմը: Ամեն բույս ունի շատ տեսակներ, վորոնցից վոմանք լավ բերք են տալիս, վոմանք վատ: Մանր գյուղացին մեն-մենակ հնարավորութուն չունի բարձր տեսակի սերմեր ցանելու ալնպիսի բույսերի, ինչպես ցորենն է, գարին, վորովհետև յեթե կողքին ցանված են հասարակ սերմեր, ապա ծաղկի ժամանակ հասարակ սերմից բուսած հասկերից ծաղկի փողին կընկնի ազնվասերմ հասկի վրա, ու կստացվի մի խառնուրդ, վորն իր հասկությամբ ավելի վատ կլինի, քան ալն սերմը, վոր ցանեցինք:

Ազնվահատ սերմերը պետք է ցանել մեծ տարածության վրա, վորպեսզի մոտակայքում

չլինեն հասարակ ցանքսեր, վորոնցից քամին ծաղկափռչին կարողանա բերել ազնվասերմ ցանքսի վրա:

Ցանքսին շատ մեծ փնաս ե հասցնում սերմի անմաքրությունը: Վատ խոտերի բոլոր սերմերը, վոր ցանվում են ընտիր սերսի հետ, բուսնում են ու խեղդում ցանքսը: Մերմը ցանելուց առաջ պետք ե լավ մաքրել, իսկ դրա համար պետք ե ունենալ մեքենա, վոր մաշելի չե վորք անտեսության համար:

7. Կան ե ուրիշ շատ գյուղատնտեսական մեքենաներ, վորոնք կարծես թե վնչ մի ազդեցություն չունեն հողի լավ բերքատվության վրա, ինչպես, որինակ, խոտահար (сенокосилка), խըրձակալ (сноповязалка), կալսելու ե այլ մեքենաները: Գյուղացիներից վոմանք կարծում են, թե առանց այդ մեքենաների յել իրանք շատ լավ կարող են լուր գնալ: Բայց իսկապես այդ մեքենաները նույնպես մեծ նշանակություն ունեն տնտեսության համար:

Այդ մեքենաներից ամեն միւը կարող ե փոխարինել 30 ից մինչև 80 մարդու վերցնենք, որինակ, հնձի մեքենան: Հնձի մեքենան տրակտորով, մի մարդ բանեցնելով, ութ ժամում ազատ կերպով կարող ե հնձել 6 դեսիատին արտ, իսկ լեթե նույն արան ուղենանք ձեռքով հնձել

մի որում, հարկավոր կլինի բանեցնել 30 մարդ: Խճակապ մեքենան տրակտորով մի որում կարող ես սեղմել ու կապել 6 դեմիատիների բերք, իսկ ձեռքով կապելու համար հարկավոր կլինի 60 մարդուց վնչ պակաս:

Ճիշտ ե, գյուղացիք չեն գնահատում իրենց աշխատանքն ու չեն ամսոսում իրենք իրենց, բայց աշխատանքի այդպիսի թիթեացումն ու արագացումը մեծ նշանակութուն ունի վնչ միայն իրանց, այլ և իրանց տնտեսության համար: Յերբ աշխատանքը տարվի մեքենաներով, գյուղացին շատ ազատ ժամանակ կունենա, վորը կարող ես նա գործադրել ուրիշ աշխատանքի վրա, ինչպես, որինակ, ցանքսի վրա լավ հոգս տանելու, անասնապահության, թռչնապահության, մեղվապահության, շերամապահության, այգեբանության, բանջարաբուծության և այլն: Այս բոլորը կբարձրացնեն տնտեսության արդյունավետությունը, հեռեապես և տիրոջ բարեկեցությունը:

Մանր գյուղացիական տնտեսությունները յերազել անգամ չեն կարող այդ մեքենաների մասին: Շատ թանկ են նրանք ու իրենց ծախսը կարող են հանել միայն մեծ ցանքսի ժամանակ:

Մանր տնտեսության մասշտիպ չե յեղ տրակտոր: Իսկ այդ մեքենայի նշանակութունը շատ մեծ ե: Տրակտորի միջոցով աշխատանքի տրա-

գութլունը, լեզան համեմատութեամբ, կարելի չէ
բարձրացնել հինգ անգամ:


Մենք բնեցիկն հողագործության ցածր
քեթեմքության գլխավոր պատճառները: Պարզ
է, վոր մանր գյուղացիական անհասական ճըն-
հասության մեջ վերացնել այդ պատճառներն
անհնարին է: Այժմ խոսենք ճնշեսության մյուս
նյութերի մասին:

Քննենք կաթնասու անասունների ինչ ար-
դյունաբերության պատճառները:

Մենք արդեն տեսցինք, վոր մեզանում
գյուղացու կովը հազիվ 40 վեդրո կաթ է տալիս
տարին, մինչդեռ լավ տնտեսութեան մեջ կովի
մի տարվա կիթը հասնում է 300-ից մինչև 400
վեդրոյի: Յեվ սա հեքիաթ է, այլ ամենաճիշտ
իրականութիւն: Ի՞նչ պետք է անել ուրեմն,
վոր կովի կիթը բարձրանա:

Առաջին—գյուղացու կովը պետք է լավաց-
նել: Վատ պահելուց, վատ կերակրից նա ալա-
տերվել, մանրացել ու վալըննացել է: Պետք է նրան
լավացնել: Յեթե նրա վրա բաց թողնենք ազնվա-
ցող լավ բուրդ, որինակ շվեյցարական տեսակի,
անշուշտ անհամեմատ լավ հորթ կստանանք: Այս
միջոցով կարելի չէ կովի և՛ հասակը ուժորացնել,
և՛ կաթը շատացնել:

Յերկրորդ՝ պետք է կովի պահելու պայման-



ները փոխել: Կովը պետք է տանել տաք ու մաքուր գոմում, պետք է ժամանակին ու լավ կերակրել: Լավ սլահելուց ու լավ կերակրելուց մինչև անգամ մեր մանր, լղար կոմս ել կավելացնի կաթը:

Այս բոլորը չի կարող կատարել մանր տընտեսը: Նրա ուժը չի պատի լավ գոմ շինել, վերտեղից պիտի ճարի լավ կեր, բանի վոր իր հողի վրա ցանել չի կարողանում, իսկ ուրիշից գնելու փող չունի:

Նույն դրության են յեվ վոչխարները: Նրանք ալլասերվում են ու փշանում, վորովհետև մանր տնտեսատերերը չունեն տաք, լավ շինություններ վոչխարի համար: Բուրդը կորցնում է իր արժեքը, վորովհետև վոչխարը պահում են կեղտի մեջ: Պետք է լավացնել և վոչխարների տեսակը, լավ դոչեր ընտրելով ու պահելու ձևն ու կերը լավացնելով, վորը դարձյալ փոքր ցանցության ուժից բարձր է:

Վոմանք կարծում են, թե փոքր տնտեսության մեջ կարող է լավ զարգանալ այգեբանությունն ու խաղողի մշակումը: Դա լել ճիշտ չէ:

Ապացույց դրան մեր խաղողի այգիները, վոր 300 փութ խաղող են տալիս դեսիատինից: Դա բացատրվում է նրանով, վոր մանր տնտեսատերը չի կարող տնտեսության մեջ դնել այն-

բան վող, վոր անհրաժեշտ է խաղողի այգին
կարգին պահելու համար — փորել, կտրել, պա-
րարտացնել, բուժել, Իսկ գինին, վոր ստացվում
է մանր տնտեսութեան մեջ, կարելի՞ չէ միթե
համեմատել այն գինիների հետ, վոր պատրաստ-
վում են լավ նկուղներում (պահվալ), ուր գոր-
ծածվում են զանազան մեքենաներ, Իհարկէ վոչ,
Իսկ այգայիսի նկուղներ, գինու ու արաղի գոր-
ծարաններ շինելն, իհարկէ, մատչելի չէ փոքր
տնտեսութեան համար:

Մենք չենք քննի այլևս գյուղատնտեսու-
թեան մյուս բոլոր մնացած ճյուղերը: Բավական
է յեմ այն, ինչ վոր ասվեց, վորպեսզի յեզրա-
կացնենք, վոր վորպեսզի գյուղացիական ռըն-
սեստութեան արդյունաբերությունն ավելանա,
պիտի վոչնչացնել մանր-անհասական ճնշե-
սություններն ու նրանց տեղ հիմնել խոշոր կոլ-
լեկտիվ ճնշեստություններ:

Գյուղացիք իրենք ել շատ լավ հասկանում
են, վոր մեն-միայնակ իրենցից վոչվոր չի կա-
րող բարելավել իր դրութիւնը: Դրա համար ել
ամեն մի գյուղում չքավորներն ու միջակները
ծանր աշխատանքի ժամանակ միացնում են ի-
րենց աշխատավոր անասուններն ու գործիք-
ներն ու միասին կատարում գործը: Գյուղացի-
ներից շատերն ել միանում, ընկերութիւններ

եյին կազմում, միասին մեքենաներ եյին գնում ու միասին ել ոգտվում նրանցից: Միքանի աղքատ տնտեսություններից կազմված այդպիսի միություններն արդեն հնարավորություն են ունենում ձեռք բերել միքանի եօան ու վոչ բարդ մեքենաներ, բայց նրանց աշխատանքը հանդիպում է մեծ անհարմարությունների:

Ձափազանց դժվար է մեքենան կանոնավոր ոգտագործել, յերբ հողերն ընկած են փոքրիկ կտորներով, իրարից բաժան-բաժան, ստիպված են լինում ահադին ժամանակ գործադրել մեքենան մի տեղից մյուսը տեղափոխելու համար: Այդ սշատճառով ել չքավոր ու միջակ տնտեսությունները յելք եյին վորոնում իրենց այդ դրությունից, ուստի հաճուքով լսեցին գյուղատնտեսական կոոպերացիայի խորհուրդները կոլեկտիվ սնեստոթյուններ կազմելու մասին, վորոնք կրճատ կոչվում են կոլխոզներ: Սկզբնորում կոլխոզները կազմվում եյին փոքրաթիվ գյուղական տնտեսություններից (տաս-տասնըհինգ) 20 — 30 դեսիատին հողով:

Կոլխոզների համար հող տրվում եր մի տեղ, գյուղացիք միացնում եյին իրենց ինվենտարն ու անասուններն ու սկսում վարել համայնական տնտեսություն:

Այդպիսի միությունն ահադին ոգտւտներ

ավելց, բաւց պարզ ե, վոր մանր կոլխոզներն ել
չեն կարող գործածել բարդ ու թանգագին մե-
քենաներ: 30 դեսիաւին հողի վրա իրենց ծախսը
կարող են հանել միայն գյուղատնտեսական
մանր մեքենաները, ինչպես՝ գութան, տափան,
փոքր սերմացան, երնող մեքենա, իսկ ավելի
խոշոր մեքենաների հարկավոր ե ավելի ընդար-
ձակ տարածությաւք հող: Վորպեսզի կոլխոզ-
ները հնարավորութիւն ունենան ամենաբարդ
ու ամենալավ մեքենաներից ոգտվել, սկսեցին
նրանց խումբ-խումբ միացնել ու համախմբում-
ների համար հիմնել մեքենա-տրակտորական
կայաններ (ձիով և լեզով), վորպեսզի հնարա-
վոր լինի մանր կոլխոզների հողերն ել մշակել
ամենալավ մեքենաներով:

Բոլոր չքավոր ու միջակ տնտեսութիւն-
ներն այժմ հասկացել են, վոր միայն կոլխոզ-
ների միջոցով կարող են նրանք դուրս գալ ի-
րենց ծանր գրութիւնից, այդ պատճառով ել
բոլոր գյուղերից ստացվում են հայտարարու-
թիւններ կոլխոզներ կազմակերպելու մասին:

Դրա համար ել խորհրդալին իշխանութիւնն
իր գլխավոր ուշադրութիւնն այժմ դարձնում ե
այս մեծ ու լուրջ գործի վրա:

Կոլխոզների կազմակերպումն այժմ կա-
տարվում ե ուրիշ յեղանակով, քան առաջ ե:

Յեթե գյուղի բնակչութիւն մեծամասնութիւնը կաթնեռամբ եւ մտնել կոլխոզի մեջ, ապա կարիք չկա մանր կոլխոզներ կազմակերպելու, այլ վողջ գյուղով պետք եւ անցնել կոլխոզի: Բայց դեռ այդ ել քիչ եւ: Ամենաձեռնառու տնտեսութիւնը կարելի չե հիմնել միայն ամենաընդարձակ տարածութիւն վրա, դրա համար ել կոլխոզի մեջ պետք եւ միացնել վոյ քե մի-մի գյուղ, այլ միանգամից միմանի գյուղ ու շատ կոլխոզների համար կազմել մի սնտեսութիւն: Վորպեսզի այս ամենը պարզ հասկանալի լինի, քննենք ու համեմատենք յերկու կոլխոզներ— մեկը վոյ ալան մեծ—200 դեսիատին հողով, իսկ մյուսը՝ շատ խոշոր՝ 20.000 դեսիատին հողով:

Փոքր կոլխոզը կազմակերպել են մի գյուղի բնակիչներ, իսկ մեծ կոլխոզը հիմնված եւ շատ գյուղերի հողի վրա:

Տեսնենք՝ ինչպես եւ կազմակերպված տնտեսութիւնը փոքր ու մեծ կոլխոզում, որինակ՝ բաժնակի մասում:

Փոքր կոլխոզի մեջ ամբողջ դաշտը բաժանված եւ հինգ մասի: Առաջին արտը ցանում են աշնանացան ցորեն, յերկրորդ ու յերրորդ արտերը՝ բաժնակ, իսկ չորրորդ արտը թողնում են խամնալու ու գարնանը ցանում են վիկ ու վարսակ կանաչ կերի համար: Հինգերորդ արտը

բաժանած և առանձին, ու անտեղ ցանում են իշառվուլտ (эспарцет): Այսպիսով կոլխոզն ունի հետևյալ ցանքսերը՝ 40 դեսիատին վիկ, 40 դեսիատին ցորեն, 40 դեսիատին իշառվուլտ և 80 դեսիատին բամբակ: Կոլխոզն ունի իր կաթնադորժարանը հիսուն կովի համար: Հողն սկզբում մշակվում էր մի տրակտորով, ուրեմն մի տրակտորին ընկնում էր 200 դեսիատին հող: Յեւ վորովհետև տնտեսության մեջ մի տրակտոր կար միայն, դրա համար ել չեր հաջողվում միաժամանակ կատարել դանադան աշխատանքներ, այլ ստիպված էին նախ վերջացնել մեկը և ապա սկսել մյուսը: Գարնանն, որինակ, տրակտորը պետք է նախ վարեր բամբակի տեղը, վարեր ու տափաներ վիկի արտը, տափաներ բամբակի հողը, նորից վարեր բամբակի մյուս արտը և այլն: Մինչ կատարում էր նա մի աշխատանքը, մյուսն ուշանում էր: Յեթե տնտեսության մեջ լինեին միջանի տրակտորներ, ապա նրանցից մեկը կարող էր վարել, մյուսը տափանել, լերորդը՝ ցանել և այսպես բոլոր աշխատանքները կկատարվեին միաժամանակ ու միանգամից: Մի տրակտորով այս ամենը յերբեք չի կարելի կատարել: Դրա համար ել տնտեսութունը վորոշեց գնել լերկորդ տրակտոր, վորի շնորհիվ այժմ ամեն մի տրակտորին ընկնում է 100

դեսիատին: Փոքր տնտեսութունը հնարավորութիւնն չունի պահելու իր սեփական արհեստանոցը նույնիսկ վարպետի գործիքները նորոգելու ու սարքելու համար, ուստի ստիպված է մեքենաները դուրսը տալ նորոգելու համար, վորի շնորհիվ մեքենաները յերկար ժամանակ պաւապ են մնում:

Փոքր կոլխոզում հացահատիկների հալաքումը կատարվում է խրձկապ մեքենայով, խոտհարքը՝ խոտհար մեքենայով: Կալսելու բարդ մեքենա փոքր կոլխոզը չունի, վորովհետև 40 դէսիատին հողի բերքի համար չի կարելի ալդալիսի մեքենա պահել: Դրա համար ել ալդալիսի մեքենաները, կարևոր դեպքում, բերում են մերձակա ագրոկայանից:

Հիսուն կովից ստացված կաթից յուղ են շինում, վորի համար կոլխոզն ունի իր սերզաս մեքենան (սեպարատորն) ու խնոցին:

Պանրի լավ գործարան շինել փոքր կոլխոզը չի չի կարող:

Այժմ տեսնեմք՝ ինչպես է դրված գործը մեծ կոլխոզում:

Հողն ալատեղ ել բաժանված է հինգ մասի, ու ալդ մասերի վրա ցանվում են նույն բույսերն, ինչ փոքր կոլխոզում: Այնպես վոր մեծ կոլխոզը կունենա 4000 դեսիատին ցորենի ցանքս,

4000 դեսիատին վիկի, 8000 դեսիատին բամբակի, 2500 դեսիատին իշառվույտի, 1000 դեսիատին բանջարանոց և 500 դեսիատին ել աբուտ:

Կոլխոզը պահում է 5000 կթի կով, 10000 վոչխար, 10000 գլուխ ել թռչուն: Կաթի մշակման համար ունի յուզա-պանրալին մեծ գործարան:

Անմշակ հում բամբակի զտումը կատարվում է իր սեփական բամբակագործ գործարանում, իսկ բամբակի սերմը մշակվում է ձիթահան գործարանում, վորտեղից ստացված կոպտոնով (ЖМЫХ) կերակրում են կաթնատու անասուններին, վորոնք ուղ պատճառով ել առատ կաթ են տալիս:

Ամեն տարի կոլխոզը ծախում է 200 ագնրվացեղ արջառներ, 500 պառաված կովեր մսի համար, 4000 թռչի, 2000 մեծ վոչխար, 500 հազարից ավելի ձու, 60000 ճուտ: Անասունները մորթելու ու միսը պատրաստելու համար կոլխոզն ունի իր սեփական ապանդանոցն ու սառցարանը, թռչուններին գիրացնելու համար առանձին հարմարավոր շենք:

Հացահատիկներն աղալու համար կոլխոզն ունի իր սեփական ջրաղացը, վորտեղից կթի կովերի համար թեփ է ստացվում: Բանջարեղենները մշակվում են կոնսերվի գործարանում, իսկ մնացորդներից ու տերեւներից կեր են պատրաստում կովերի համար:

Հողերը մշակելու համար կոլխոզն ունի 100 տրակտոր, ասիակես վոր ամեն մի տրակտորին ընկնում է 200 հեկտար հող, և տրակտորը կատարում է դաշտալին բոլոր աշխատանքները, բացի բամբակի շարքերի միջի վարը, վորի համար կոլխոզն ունի 500 ձի, վորոնք միաժամանակ կատարում են դաշտալին աշխատանքներին պետք յեղած տեղափոխություններն ու տալիս են լավ ազնվացեղ քուտակներ ալդրներից։ Հացը կալսելու համար կան տասը կալսող բարդ մեքենա։

Վողջ ինվենտարը կարևոր դեպքում նորոգվում է կոլխոզի սեփական մեծ արհեստանոցում, դրա համար ել մեքենաները յերբեք պարապ չեն կանգնում։ Կոլխոզը պահում է հինգ գյուղատնտես, մի մեքենայագետ ճարտարապետ (լինժեններ-մեխանիկ), վոր հսկում է մեքենաների վրա, փականագործներ (սլեսարներ), դարբիններ, խառատներ (տոկար) և այլն։

Բոլոր գործարաններն ու արհեստանոցը գործում են ելեկտրականությամբ, վորը միաժամանակ լուսավորում է բնակարանները։

Այս համառոտ նկարագրությունից հետո համեմատեցեք այս յերկու կոլխոզներն ու դուք կտեսնեք, թե ինչպիսի մեծ տարբերություն կա նրանց մեջ։ Մեծ կոլխոզն ոգսագործում է

մեհնեմաները լիապես, վորի շնորհիվ ել նրանց աշխատանքը յերկու անգամ ավելի եծան ե նստում, քան փոքր կոլխոզում: Նրա սնեստության բոլոր արհադրանքները ձեակվում են սեղն ու սեղը, վորը նախ քան ի սնեստությանն ահագին ոգուսներ յեվ յերկրորդ՝ դրա շնորհիվ սրնեստությանն են մնում բոլոր թափթփուկները, ինչպես՝ թեփը, ալյուրի փոշին, կոպտոնը յեվ ալյն:

Մեծ սնեստության սեջ վոչինչ չի կորչում անոգուս, սինչեվ անգամ բանջարեղենի սերեվները մեակվում են ու գործածվում իբրեվ անասունների կեր: Դաշտալին բոլոր աշխատանքները կատարվում են ամենալավ մեքենաներով, վորոնք շատ քիչ մալդ են պահանջում, և այդ պատճառով ել շատ աշխատող ձեռքեր ազատվում են, վորի շնորհիվ մեծ կոլխոզներում պարզանում ե անասնապահութիւնը, վոչխարաբուծութիւնը, թռչնապահութիւնը, մեղվապահութիւնը, շերամապահութիւնն, ու այս բոլորից հետո յել ահագին քանակութեամբ գործարաններ են աշխատում:

Փոքր կոլխոզը սրանից և վոչ մեկը չի կարող կատարել: Դրա համար նա միջոցներ չունի: Բացի այս՝ այնքան քիչ արդյունք ե ստանում նա, վոր չի կարողանում նույնիսկ մի գործա-

րան բանալ: Աշխատանքն այնտեղ կիսով չափ միայն կատարվում է մեքենաներով, դրա համար էլ աշխատող ազատ ձեռքեր շատ քիչ կան ու աշխատանքն էլ շատ ավելի ծանր է:

Նկարագրված մեծ կոլխոզը ցույց է տալիս մեզ, թե քանի անգամ կուլեկտիվ խոշոր տնտեսությունն ավելի ոգտակար է, քան մանրը: Յեթե կազմվեն ավելի մեծ կոլխոզներ, քան մեր նկարագրածն է, ավելի լավ կլինի: Աշխատավոր ձեռքերն ավելի ևս շատ կլինեն, ու կարելի կը լինի ավելի ընդլայնել անասնապահությունը, բանջարաբուծությունը, նոր այգիներ դրելը և այլն: Վորքան մեծ լինի կոլխոզն, այնքան ձեռնտու կլինի նա: Դրա համար էլ գյուղացիական տնտեսությունը պետք է վերակազմել այնպես, վոր բոլոր մանր, անհատական տնտեսությունները (բացի կուլակային տնտեսություններից, իհարկե), բոլոր մանր կոլխոզները միացնել մի մեծ, խոշոր տնտեսության մեջ 40, 60 100 հազար դեսիատին տարածությամբ:

Գյուղացիական մասնակի տնտեսության դեպ կոլխոզայինի փոխանցումը հեշտացնելու և արագացնելու համար խորհրդային կառավարությունն ու գյուղատնտեսական կոոպերացիան կազմակերպում են մեքենա-արակտորային կայաններ ու կետեր, վորոնք սլաքմանավորվում են

ահագին շրջանների բոլոր գյուղերի հետ ու հանձն տունում կատարել դաշտային բոլոր աշխատանքները՝ վարել, տափանել, ցանել, հնձել ու կախել: Աշխատող անասուն տալիս է գյուղացին, իսկ ամենալավ մեքենաները՝ տրակտորակայանները: Բոլոր աշխատանքները կայանը կատարում է թեթև վճարով: Մեքենա-կայանների ու սղունկտերի հաջող աշխատանքի համար պետք է բոլոր հողերը միացնել: Մանր-անհատական գյուղացիական տնտեսությունն իր տեղը զիջում է համայնական (կոլեկտիվ) տնտեսության:

Բոլոր այն գյուղերը, վորոնց հողի վրա աշխատում են մեքենատրակտորային կայաններն ու կետերը, վերածվում են մեծ կոլխոզների, իսկ այդ կոլխոզների մեջ տնտեսությունն այնպես է վերակազմվում, վոր ստացվի ամենաբարձր արդյունք:

Այն մեքենա-տրակտորային կայանը, վոր ունի 100 տրակտոր, կաբոդ է միացնել 25000 դեսիաաին հող ու կազմել մի տնտեսություն, վորի մեջ կարելի չէ իրագործել այն բոլորն, ինչ նկարագրեցինք խոշոր կոլխոզի վերաբերմամբ: 200 տրակտոր ունեցող կայանը կմիացնի 40000 դեսիաաին, 400 տրակտորը՝ 80000 ե այլն:

Վերավերտե ամեն տեղ չի կարելի միանշա-

մից բաց անել մեքենա-տրակտորային կայան-
ներ, քանի վոր դրա համար մեծ միջոցներ ու
շատ մեքենաներ են պահանջվում, առաջ հիմն-
վում են մեքենա-տրակտորային կետեր 10,
20 տրակտորով, վորոնք նույնպես ստեղծում
են խոշոր կոլխոզներ: Հետագա տարիներում այդ
կետերն աստիճանաբար կմեծանան, կընդար-
ձակվեն ու կդառնան մեքենա-տրակտորային
կայաններ: Այն տեղերում, ուր առաջ մանհար
ե տրակտորային կետեր հիմնել, պետք ե միաց-
նել մի կետում ձիերը, չեզներն ու գործիքները:
Այդպիսի միավորումն ահագին ոգուտներ կտա
տնտեսությանը:

Այժմ կառավարութիւնը շինում ե նորա-
նոր գործարաններ տրակտորներ պատրաստելու
համար, և արդեն շատ շուտով կհասնի այն ժա-
մանակը, յերբ ամեն տեղ հնարավոր կլինի հիմ-
նել մեքենա-տրակտորային կայաններ, իսկ մե-
քենա-տրակտորային կետերը կմնան միայն
այն տեղերում, վորտեղ չկան ագակտորով մշա-
կելու հարմար ընդարձակ տարածութիւններ:

Տրակտորների հետ միասին պատրաստվում
են և ամեն տեսակի մեքենաներ, վորոնք պետք
են հողի մշակման, քերթը հալածելու, կալսելու
համար: Այդ մեքենաների գործադրութեամբ գլու-
ղացու աշխատանքը հողագործութեան մեջ չա-



փաղանց թեթևանում ե, և նա լալն հնարավորություն ե ստանում պարապելու տնտեսութեան և ուրիշ ճշուդերով՝ տնտեսապահությամբ, թոշնապահությամբ, շերամապահությամբ, հողի ալգիներ, բանջարանոցներ գցելով:

Պարարտացման նյութեր պատրաստող գործարանների կառուցումը հնարավոր կգարձնի խիստ բարձրացնել հողի բերքատվությունն ու ավելի արդյունավետ դարձնել գյուղատնտեսությունը:

Խորհրդային կառավարությունը չի խնայում և վնչ մի ուժ ու միջոց, վորպեսզի արագացնի գյուղացիական տնտեսութեան վերակազմությունն ու մոտեցնի այն յերջանիկ ժամանակը, յերբ գյուղում այլևս չի լինի և վնչ մի խեղճ ու կրակ գյուղացիական տնտեսություն, յերբ ամեն տեղ կվորոտան մեքենաները, յերբ հողն իր առատ բերքով կպերազանցի յավրոպական ու ամերիկական յերկրներին:

Խոշոր կոլեկտիվներ կադմակերպելու համար կառավարությունը բաց ե թողնում տասնյակ միլիոններով վարկեր, և չեթե բնակչությունը միահամուռ կ'ոչի գործի, հնդաժյակի վերջին մենք ամեն տեղ կունենանք ալնալիսի շրջաններ, ուր անցած կլինի ընդհանուր համաշնացումն (կոլեկտիվիզացումն), ալսինքն չեն լինի այլևս գյուղ-

դացիական անհատ տնտեսութեաններ, այլ ամեն
տեղ կազմակերպված կլինեն կոլխոզներ, ու
ներանց մեջ տնտեսութեանը դրված կլինի այն-
պիսի բարձրութեան վրա, վորի մասին կապի-
տալիստական յերկրները չեղադել անդամ չեն
կարող:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039902

(064)

ԳԻՆԸ 5 ԿՈՊ. Ս. (1 մամուլ)

A $\frac{I}{4421}$



Как перестроить крестьянское хозяйство

Госиздат ССР Армении
Эривань — 1930